



# ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ

Ա.Ս. ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒ ԱՐԵՄՏԵԱՆ ԹԵՄԻ

**WESTERN PRELACY**

OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA

**H.E. ARCHBISHOP MOUSHEGH MARDIROSSIAN, PRELATE**

Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745

E-mail: [Prelacy@aol.com](mailto:Prelacy@aol.com) Website: [www.westernprelacy.org](http://www.westernprelacy.org)



Ս. ԶԱՌԱՍՆԻՑ ՄԱՆԿԱՆՑ ԵԿԵՂԵՑՈՅ ՕԾՄԱՆ 20-ԱՄԵԱԿԻՆ ԱՌԻԹՈՎ  
ՄԱՏՈՒՑԱԾ Ս. ՊԱՏԱՐԱԳԻ ԸՆԹԱՑՔԻՆ

## **ՄԱՆՈՒԿԻ ԽՈՆԱՐՅՈՒԹԵԱՄԲ ԾԱՌԱՅԵՆՔ, ՈՐՊԵՍՉԻ ՀԱՄԱՏՔԻ ԾԱՌԱՅՈՒԹԵԱՄԲ ԲԱՐՁՐԱՆԱՆՔ**

*ՊԱՏԳԱՍԵՑ ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱՉԱՆ ՀԱՅՐԸ*

Կիրակի, 16 Նոյեմբերին, Սրբոց Զառասնից Մանկանց եկեղեցւոյ օծման 20-ամեակին առիթով, Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Մուշեղ Ա. Արք. Մարտիրոսեան, եպիսկոպոսական հանդիսաւոր սուրբ եւ անմահ պատարագ մատոյց եւ իր հոգեւոր պատգամը ուղղեց գաղութի գաւակներուն: Սուրբ Սեղանին սպասարկեցին Զրիստոնեական Դաստիարակութեան Բաժանմունքի վարիչներէն Հոգշ. Հայր Պարթեւ եւ եկեղեցւոյս հոգեւոր հովիւ Արժ. Տ. Հրանդ Քին. Երեցեան:

Սրբազան Հայրը քարոզի պահուն, օրուան խորհուրդէն թելադրուած, Նախ փառք տուաւ ամենաբարին Աստուծոյ իր տուած մեծ շնորհքին համար, որով 20 տարիներ առաջ բոլորին երազն ու փափաքը կ'իրականացնէր սեփական եկեղեցի մը ունենալու ուրախութեամբ, որ քսան տարիներէ ի վեր կը հոգայ շրջանի հաւատացեալներու հոգեւոր սնունդը: Սրբազան Հայրը խօսեցաւ գործող ու այս կեանքէն առ յաւետ մեկնող երախտաւորներու մասին, որոնք խորունկ տեսլականով ու հաւատքով կրցան երազը իրականութեան վերածել ու յոյս ներշնչել գալիք բոլոր սերունդներուն: «Մենք ալ այսօր - պատգամեց Սրբազան Հայրը - եկե՛ք մանուկի խոնարհութեամբ ծառայենք, որպէսզի հաւատքի ծառայութեամբ միասնաբար բարձրանանք»: Զարոզի աւարտին, Սրբազանը գնահատեց եկեղեցւոյ հոգեւոր հովիւը, Հոգաբարձութիւնը, Երեսփոխանները, Տիկնանց Միութիւնը, սարկաւազաց ու դպրաց դասերը, եւ բոլոր երախտաւորները, աղօթասացին բառերը կրկնելով՝ «Ողորմէ՛, Տէ՛ր, եկեղեցւոյ շինութեան աշխատողներուն, երախտաւորներուն, նուիրատուներուն ու ծառայողներուն, եւ անոնց՝ որոնք սուրբ եկեղեցւոյ հովանիին տակ կը հանգչին»:

Պատարագի աւարտին, ներկաները խանդավառութեամբ երգեցին «Կիլիկիա» մաղթերգը, որմէ ետք Սրբազան Հօր պահպանիչով՝ գոհունակ սրտով մեկնեցան իրենց տուները:

Նշենք, որ օր մը առաջ, Շաբաթ, 15 Նոյեմբերի երեկոյեան, «Ղուկասեան» սրահին մէջ, հովանաւորութեամբ Առաջնորդ Սրբազան Զօր եւ կազմակերպութեամբ Եկեղեցւոյ Զոգաբարձութեան եւ Տիկնաց Միութեան, տեղի ունեցաւ Եկեղեցւոյ օծման քսանամեակին նուիրուած ճաշկերոյթ, որուն ընթացքին արտասանուեցան յիշատակի խօսքեր, ցուցադրուեցաւ այս առիթով պատրաստուած տեսաերիզ մը, գործադրուեցաւ գեղարուեստական յայտագիր, կատարուեցաւ մոմավառութիւն եւ աւարտին կտրուեցաւ քսանամեակի կարկանդակը: Քնահատանքի ու քաջալերանքի վերջին խօսքը արտասանեց Առաջնորդ Սրբազան Զայրը, որ շնորհաւորեց Օրէնճ Քաունթիի մեծ ընտանիքը եւ բեղուն տասնամեակներ մաղթեց անոր:

## **PRELATE CELEBRATES DIVINE LITURGY ON THE 20<sup>TH</sup> ANNIVERSARY OF THE CONSECRATION OF FORTY MARTYRS CHURCH**

On Sunday, November 16<sup>th</sup>, H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, celebrated Divine Liturgy and delivered the sermon at Forty Martyrs Church in Orange County in honor of the 20<sup>th</sup> anniversary of the consecration of the church.

Assisting the Prelate at the altar were Very Rev. Fr. Barthev Gulumian and parish pastor Rev. Fr. Hrant Yeretizian.

In his sermon the Prelate thanked God for the realization of the dream twenty years ago for the parish to have its own church and for the spiritual guidance the church has been providing since. The Prelate paid tribute to the devoted servants who contributed to the establishment of the church and in doing so inspired coming generations. The Prelate concluded his sermon by commending and offering a prayer for the Pastor, Board of Trustees, Delegates, Ladies Auxiliary, deacons, altar servers, and choir members.

The service concluded with the Prelate's benediction and the singing of "Giligia".

The 20<sup>th</sup> anniversary banquet took place under the auspices of and with the participation of the Prelate on the evening of Saturday, November 15<sup>th</sup>, at "Gugasian" Hall. The banquet was organized by the Pastor, Board of Trustees, and Ladies Auxiliary, and included remarks, an artistic program, a video presentation, and a candle lighting ceremony. The Prelate conveyed his congratulations and encouragement and wished the church many more years of service to the community.